

ՀԱՆԳԻՍ Տ. Տաթև Արք. Ղարիպեանի Պրագիլահայոց Առաջնորդ



ՓՈԽԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ

Սիրելի հաւատացեալներ,

Վիշտը ունինք այսօր յայտնելու կարեւոր կորուստ մը, որ ունեցաւ Ս. Աթոռոյս Միաբանութիւնը յանձին իր երիցագոյն անդամներէն միոյն՝ Տ. Տաթև Արքեպիսկոպոս Ղարիպեանին, Պրագիլիոյ Հայոց Առաջին Առաջնորդին, որ խաղաղութեամբ հանգեաւ Ի Տէր մեր, 26 Նոյեմբեր 2014-ին, Սան Փաւլոյի մէջ, Պրագիլ:

«Ժամանակ դարձի իմոյ եհաս», վերադարձաւ հոն, ուրկէ եկած էր: Իր հոգին կը վերադառնայ անմահութեան կեանքին:

Տխուր են մեր հոգիները. իր մահը խոցեց ամէնքս: Զինք կը սպասէինք որ մեր Ծննդեան տօնին այցելէր իր հոգեւոր հայրենիքը՝ Երուսաղէմ, մասնակցելու Ծննդեան արարողութեանց, առիթ մը, որ երբեք չէր ուզեր կորսնցնել, հակառակ իր մարմնական դժուարութեանց: Խաղաղութիւն իր հոգիին:

Հանգուցեալը, ամէն բանէ առաջ, իր եկեղեցին սիրող անձ մըն էր, նախանձախնդիր հաւատացեալ հոգի մը: Ծնած էր Հալէպ, 1937-ին, Զէյթունցի հաւատացեալ ընտանիքէ, որ խոր

արմատներ ձգած էր իր հոգիին մէջ՝ հայկական աւանդութեանց, բարեպաշտութեանց և շէնշող սովորութեանց:

Ան կը յաճախէր տեղոյն ազգային վարժարան և Ֆրէրներու դպրոցը և ապա կու գար Երուսաղէմ: Կը յիշեմ իր ժամանումը մեր Ժառանգատրաց վարժարան: Ան աւելի մեծ էր հասակով քան բոլորս, և այդ պատճառով կը դառնար Ընծայարանի աշակերտ Գերշ. Տ. Յակոբ Սրբազան Վարդանեանի տեսչութեան օրով ու հովանաւորութեամբ:

1963-ին կը ձեռնադրուի կուսակրօն Աբեղայ երեք ընկերներու հետ՝ Հայր Դանիէլ Շամլեանի, Հայր Սամուէլ Աղոյեանի և Հայր Վահան Թօփալեանի, ձեռամբ հոգելոյս Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեանի՝ Պատրիարքին Հայ Երուսաղէմի, Խարտավիլակութեամբ Դպրոցի Տեսչին, դառնալով անոր զինուորեալ միաբանութեան անդամ:

Մի քանի տարի Ժառանգատրաց վարժարանի փոխ-տեսչութեան պաշտօնը վարելէ ետք, կը դրկուի Զորտուպա, Արժանթին, հրաւերով հանգուցեալ Բաբգէն Արք. Ապատեանի և անկէ ետք կ'ընտրուի Պրագիլահայոց առաջնորդ: Այսպիսով կը սկսին իր հովուական ծառայութեան տարիները, զորս անցուց պանդխտութեան մէջ, այսինքն հեռու Երուսաղէմէն, սակայն առանց մոռնալու զայն՝ իր յաճախակի կատարած այցելութիւններով: 1984-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի, յէջմիածին: Իր քահանայութեան և եպիսկոպոսութեան ամբողջ շրջանին, աւելի քան 50 տարի, ան հանդիսացաւ Օրուան Մարդը՝ նախանձախնդիր իր դերին, օժտուած ընկերային բնատուր ձիրքերով և բնատրութեամբ, որոնք զինք սիրելի դարձուցին բոլորին իր մշտագուարթ և մշտաժպիտ արտայայտութեամբ:

Հիշող է, մարմինը տկարացած էր, բայց ոչ իր հոգին: Ապրիլը իր իրաւունքը կը համարէր ան: Կը սիրէր ճամբորդել, մանաւանդ բեմբասացութիւնը՝ իր վստահունչ խօսքերով՝ Հայ եկեղեցոյ մասին, Հայ Երուսաղէմին և իր երազային Հալէպի մասին և շատ անգամ իր զէյթունցիական բարբառով իրեն մօտիկ շրջանակներուն մէջ:

Այս բոլորէն վեր Երուսաղէմը եղաւ առանցքը իր հոգիին: Կը յիշեմ զինքը սարկաւա-

գութեան և Ժառանգաւորաց վարժարանի իր փոխ-տեսչութենէն, ուր իր մասնակցութիւնը կը բերէր տարեկան նոր տարուան հանդէսներուն, և ինք գլխաւոր հերոսն էր բեմին վրայ: Կը յիշեմ զինքը մեր սիրելի Սեան Սրբազանին հետ, այն ատեն աշակերտ դպրոցի, նոյնքան տաղանդաւոր մեր հանդէսներուն, գլխաւոր շէնշող խնդացնող ծիծաղաշարժ իրենց տրամաներով, որ մինչեւ հիմա տակաւին թարմ են անոնց տեսարանները, երբեմն նոյնիսկ առանձնութեանս մէջ մտածումներուս՝ հոգիս խայտացնող: Հանգուցեալ Պրն. Յակոբ Պուճիգանեան, մեր դպրոցին վաստակաւոր կրթական տեսուչը, կ'ըսէր. «Այս երկու Ղարիպեանները դերասան ծնած են»: Խանդավառ էր: Կը յիշեմ իր ձայնը յստակ, բարձր, անկեղծ և կշռաւոր:

Մինչեւ իր կեանքին վերջը կապուած մնաց Երուսաղէմի իտէալին: Քրիստոսի ծննդեան տօներուն, իր յաճախակի այցելութիւններուն առիթով կը հաւաքուէինք Հայր Նորայրին սենեակին հանդիպակաց նստոցներուն վրայ, և կը վայելէինք իր մտերմիկ զուարճախօս պատմութիւնները, և կը խմէինք Պրագիլիայէն իր հետ բերած պրագիլիական համեղ սուրճը: Խօսակցութեանց ընթացքին շատ անգամ կ'ըսէր մեզի. «Տղա՛ք, ինչ բախտաւոր էք որ դուք զիրար ունիք: Եթէ անհանգիստ չըլլայի և վանքին վրայ բեռ ըլլալու վախը չունենայի, ես ալ Երուսաղէմ կը վերադառնայի»: Իր այս փափաքը սրտին մէջ, տարույս Նոյեմբեր ամսոյն վերջին շաբաթներուն, երիկամունքի դժուարութեան պատճառով կը յանձնուէր իր յաւիտենական վերադարձին:

Այլեւս ինք բացակայ է մեզմէ, բայց իր խանդավառող ներկայութիւնը պիտի մնայ մեր յուշերուն մէջ որպէս պատկեր, իր անոյշ ժպիտով, որպէս երազ միշտ իր հրաբորբ հոգիին: Նոյեմբեր 26-ին Սան Փավոյի մէջ կը կատարուի իր վերջին օծման արարողութիւնը՝ ձեռամբ նորած Տ. Նարեկ Սրբազան Պերպերեանի՝ նոր առաջնորդին Պրագիլիոյ:

Սիրելի Տաթև Սրբազան, կը բաժնուիս մեզմէ յաւիտ, բայց մենք քեզ երբեք պիտի չմոռնանք: Հա՛յր, Տէր մեր, հանգչեցուր գլուխը մեր Տաթև Սրբազանին՝ խաղաղ բարձի վրայ և ընդունիր զինք Քու յաւերժութեանդ մէջ: Աղօթենք առ Աստուած իր յաւիտենական հանգիստին համար: Թող իր ծառային հոգին դասէ ընդ դասս հոգուց ծառայիցն, պահէ գԱզգս Հայոց, Հայաստանեայց Եկեղեցին, գմայր Աթոռն մեր Սուրբ Էջմիածին, միախարէ և զօրացնէ վշտաբէկ Աթոռակալն առաքելական Աթոռոյս Սրբոյ Երուսաղէմի և Միաբանութիւն նորին:

Անցեալ Յունուարի ծննդեան տօներուն, երբ Երուսաղէմ կը գտնուէր, միաժամանակ մեր Միաբանական Ընդհանուր Ժողովին մասնակցելու, առիթով մը սենեակս եկաւ և ըսաւ. Հայր Պարէտ, քու վրադ պարտականութիւն մը պիտի դնեմ. խօսք տուր որ պիտի կատարես: Սիրով, ըսի, և թողո՞ջ մը տուր ինձի, ըսաւ: Սրբազանը թողոթին վրայ գրեց իր տապանաքարին վրայ արձանագրուելիք գրութիւնը, և ըսաւ, երբ ինք մեռնի, խնդրեց որ իր աճիւնները փոխադրուին և ամփոփուին Միաբանից հասարակաց գերեզմանոցին մէջ: Ազդուած այդ խօսքէն, նոյն օրը թողոթին յանձնեցի իմ զգացումներս և զայն կարդացի իր իսկ ներկայութեան, գերեզմանին վրայ արձանագրելու իմ վերջին սրտի խօսքը Սրբազանին մասին:

*«Հոս կը փակեմ իմ աչքերս կարօտ՝
ու երազն իմ վառ,
վերջալոյսին անձնատուր՝
տրտուած խորհուրդը կեանքին:*

*Դարձդ է ինձի,
յաւերժօրէն մնալու
ներկային մէջ
մեր նախնիքներուն:
Կը զգամ ջերմութիւնը
ծոցին այս տաքուկ համրոյրին
զի հեռացած չեմ քեզմէ
ինչպէս ծաղիկը իր բոյրէն:*

Քիչ մը յուզումով վերջին ցոտեութիւնն է որ ըսինք:

29 Նոյեմբեր 2014
Խօսուած Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ
իւր հոգեհանգիստին առիթով:

Պարէտ Ծ. Վրդ. Երեցեան

